

# ՌՈՔԵՐՏ ՖՐՈՍԹԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ\*

Արմենուհի Ղալաջյան

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Հոգվածը ներկայացնում է 20-րդ դարի ամերիկյան բանաստեղծ Ռոբերտ Ֆրոսթի գրական ստեղծագործության առանձնահատկությունները: Այն լուսաբանում է բանաստեղծի մտահորիզոնը, նրա յուրահատուկ մոտեցումները կյանքին՝ բնության ազդակների հատուկ շեշտադրումներով: Հոգվածում զգալի տեղ է զբաղեցնում ժամանակի և մարդու փոխհարաբերությունների քննությունը: Բանաստեղծությունների ոչ ավանդական ձևը Ֆրոսթի պոեզիայի բնորոշ գծերից է: Հոգվածը նաև ներկայացնում է Ռոբերտ Ֆրոսթի երեք բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները:

**Բանալի բառեր.** բանաստեղծություն, բնություն, ավանդույթ, ռիթմ, ներդաշնակություն, խորհրդանշական իմաստ:

## Ներածություն

20-րդ դարի սկզբին ի հայտ եկած մոդեռնիստական պոեզիան ներկայացնում էր մի խումբ բանաստեղծների, որոնք գրում էին ի պատասխան այն ամենի, ինչը մնացել էր վիկտորյան ժամանակաշրջանի պոեզիայից: Նրանք հիմնականում փորձում էին տեսնել աշխարհը իրենց վաղ ժամանակաշրջանի պոետիկ մշակույթին հատուկ անսահմանության մեջ: Նրանց համար օրինակ էր ծառայում հին հունական գրականությունը, չինական և ճապոնական պոեզիան, բարդերը, Դանտեն և միջնադարյան իտալական փիլիսոփա բանաստեղծները: Սկզբնական շրջանում այս բանաստեղծները գրում էին փոքրիկ քնարական չափածոներ, իսկ հետագայում առանձնացավ մի հատուկ ուղղություն, որը հիմնականում կարևորում էր բառերի, բառակապակցությունների և բովանդակության բուն էությունը, և ոչ թե որևէ փոխաբերական կամ խորհրդանշական իմաստ: Այս մոտեցումն արտացոլվում է Էզրա Փաունդի *Կարդալու այբուբենը* գրքում (1937), որտեղ նա խորհուրդ է տալիս երիտասարդներին բառարանով սովորել բառերի նշանակությունները: Իսկ երբ Վիլյամ Կառլոս Վիլյամսին հարցնում են, թե ինչ է բանաստեղծությունը, նա պատասխանում է. *Բանաստեղծությունը բառերից կազմված մի փոքրիկ կամ մեծ մեքենա է* (Modernist Poetry in English: Robert Frost 2016):

Այս ժամանակահատվածում բացառիկ և գրեթե մեկուսացած դիրք է գրավում Ռոբերտ Ֆրոսթը (1874-1963), որի պոեզիային բնորոշ է վերոհիշյալ պայմաններում ձևավորված լակոնիկ անսահմանությունը, որը երբեմն արժարժում է հավերժական խնդիրներ:

## Ռոբերտ Ֆրոսթի կյանքն ու ստեղծագործությունները

Հարկ է նշել, որ Ռոբերտ Ֆրոսթին վերաբերվող կենսագրական փաստերը բավականին սուղ են և երբեմն կարիք ունեն ճշգրտման: Չկան ինքնագիր հուշեր

\* Հոգվածն ընդունվել է տպագրության 24.02.2017:

կամ նամակներ՝ բացի որոշ կենսագրական տվյալներից, ժամանակակիցների հուշերից:

Ռոբերտ Ֆրոսթը ծնվել է 1874թ. մարտի 26-ին Կալիֆորնիայի Սան-Ֆրանցիսկո քաղաքում: Հայրը լրագրող էր, մայրը՝ ազգությամբ շոտլանդուհի, ուսուցչուհի: 1886 թ. թոքախտից մահանում է նրա հայրը, իսկ մայրը, կատարելով հոր ցանկությունը, դասեր և 12ամյա Ռոբերտի հետ տեղափոխվում է Լոռենս, Մասսաչուսեթս: Տղան այստեղ սովորում է քաղաքի միջնակարգ դպրոցում, որտեղ հանդիպում է իր դասընկերուհուն, հետագայում կյանքի ընկերուհուն՝ Էլինոր Ուայթին, որի հետ ելույթ էին ունեցել ավարտական հանդիսության ժամանակ: 1892թ. Ռոբերտ Ֆրոսթը ավարտում է դպրոցը և ընդունվում է Ղարթմութի համալսարան: Այա մի քանի ամիս անց վերադառնում է տուն և ավարտում կիսատ թողած գործերը:

1894թ. տպագրում է իր առաջին *Իմ թիթերը*. *Էլեգիա* բանաստեղծությունը *The Independent* շաբաթական ամսագրում, որի գրասենյակը Նյու Յորքում էր: Այա Ֆրոսթը տրվում է գյուղական կյանքին և ստեղծում բնությանը նվիրված բազմաթիվ բանաստեղծություններ: Այն տարիները, որոնց ընթացքում Ֆրոսթը զբաղվում էր հողագործությամբ, բավականին բեղմնավոր էին և հատկապես այդ ժամանակաշրջանում նա գովերգում է իր և հողի միջև հաստատված կապը: Սա է պատճառը, որ հողագործությունը և բնությունը ուրույն տեղ են զբաղեցնում նրա պոեզիայում:

1912թ. Ֆրոսթը վաճառում է Նյու Հեմփշիրի ագարակը և ընտանիքով մեկնում Անգլիա, որտեղ հրատարակիչների մեծ մասը հնարավորություն էին տալիս պոետներին դրսևորելու իրենց բանաստեղծական կարողությունները: Ընդամենը մի քանի ամիս անց 38 ամյա Ֆրոսթը տպագրում է իր առաջին գիրքը՝ *Մի տղայի երազանքը*. *Բոստոնի հյուսիսը*:

Ամերիկայում անուշադրության մատնված Ֆրոսթը Անգլիայում ճանաչում է ստանում: Այստեղ ծանոթանում է Էզրա Փաունդի և Էդվարդ Թոմասի հետ, որոնք զգալի ազդեցություն ունեցան Ֆրոսթի գրական գործունեության վրա: Նրանք առաջիններն էին, որ խրախուսեցին և ուղղորդեցին Ֆրոսթին: Անգլիայում ապրած տարիները լավագույնն էին Ֆրոսթի կյանքում, սակայն երբ 1914-ին սկսվում է Առաջին աշխարհամարտը, 1915-ին Ֆրոսթը ընտանիքով ստիպված վերադառնում է ԱՄՆ, ճանաչվում որպես խոստումնալից գրող և կայուն արմատներ զգում ամերիկյան գրականության մեջ: Հրատարակիչ Հենրի Հոլթը գնում է *Բոստոնի հյուսիսը* ժողովածուի բոլոր օրինակները, իսկ 1916թ. լույս է տեսնում Անգլիայում ստեղծված բանաստեղծությունների ժողովածուն, ինչպես նաև Էդուարդ Թոմասին նվիրված աշխատանքը: *Atlantic Monthly*-ն, որը նախկինում մերժել էր Ֆրոսթի գործերը, ետ է կանչում նրան: Արդեն ճանաչում ստացած Ֆրոսթը ուղարկում է նույն բանաստեղծությունները, որոնք չէին ընդունվել Անգլիա գնալուց առաջ:

**Ֆրոսթի թեմաները** առաջին հայացքից պարզ, սակայն ներքուստ խորը փիլիսոփայական են: Նրա հիմնական թեման մարդն է՝ բնության մեծ խորհրդի առաջ, գովերգվում են մարդուն հավերժորեն ուղեկցող արժեքներ, ինքնաբացահայտման և ինքնաձևավորման ազդակներ, գերիշխում է ձգտումը առ բնություն ու մենություն:

Ֆրոսթը գրել է **հանգավորված և անհանգ բանաստեղծություններ**: Հանգավորված բանաստեղծությունները, որպես կանոն ծավալով փոքր են և ունեն ա-

վանդական չափեր: Անհանգ բանաստեղծությունները հարյուրավոր տողերից են կազմված: Ֆրոսթին ճանաչում բերեց հինգ-վեց հանգավորված բանաստեղծություն, որոնք իրենց արժանի տեղն են գտել անգլիական պոեզիայի ժողովածուներում: Ֆրոսթը համոզված էր, որ *Բառակապակցությունների հնչեղությունը բառերին իմաստ է տալիս, կյանքում մենք միշտ առանչվում ենք դրա հետ, իսկ գրականության մեջ հաճախ այն չենք գտնում: Մեր լսողությանը հասնող բառերն ունեն որոշակի ծայնային ձևակերպում, ձև: Առօրյա գրույցում հնչող բառն ու բանաստեղծական չափում ունեցող բառը պետք է կռվեն միմյանց հետ: Այդ կռիվը ուղղորդվում է հմուտ բանաստեղծի կողմից և ավարտվում հաշտությամբ* (Спитлер, Торн 1979:306):

Քանի որ լեզուն գոյություն ունի որպես կենդանի խոսք, բանաստեղծը ականջ է դնում այդ խոսքին: Նրա բոլոր մտքերը փորձարկվում են գործով: Այն ժամանակ, երբ անհանգ գրելով հրապուրվելը հասել էր իր գագաթնակետին, Ֆրոսթը չհրապուրվեց ավանդական ձևերով, նա բարդացրեց իր գործը, փորձեց համադրել սովորական բանաստեղծական չափերը խոսքի բնական ռիթմի հետ:

Նման բանաստեղծական սկզբունքով ստեղծված ֆրոսթյան գործերն ամենևին էլ չեն համարվում Նոր Անգլիայի ագարակատերերի խոսքի սովորական ընդօրինակում: Ի տարբերություն շատ ժամանակակից բանաստեղծների, որոնք կարծում էին, որ բանաստեղծությունն արհեստականորեն ստեղծած մի բան է, Ֆրոսթը գտնում էր, որ բանաստեղծությունը երբեք չի պատրաստվում: *Այն սկսվում է մի կույտ արցունքով՝ կոկորդում կանգնած, որին դուրս է մղում սխալի գիտակցումը, մենությունը և կարոտը տան հանդեպ: Գաղափարը երբեք չի նախորդում բանաստեղծության մեջ առկա մտքին: Ամենահաջողված բանաստեղծությունները նրանք են, որոնք ծնվում են անհասկանալիից, ցավից, անխուսափելի անհանգստությունից, տառապանքից* (Poetry Foundation: Robert Frost 2016):

Ֆրոսթը ապացուցում է, որ բանաստեղծությունն ինքն իրեն ստեղծվում է գրելու ընթացքում: Այն ինքն իր մեջ պարփակվում է այն գաղափարը, որին հետամուտ է, և եթե դա չկա, չկա և բանաստեղծություն: Ընթերցողին գրավում է անշտապ շարժումը դեպի ճշմարտություն՝ փոփոխականից մինչև անփոփոխ, և այդ պահին մոտենալու անխուսափելիությունը, երբ ամեն ինչ լիովին կբացահայտվի: Ընթերցողը հասկանում է, որ ընկալում է կարդացվող տողերը մի քանի մակարդակների վրա, որովհետև Ֆրոսթի նկարագրած երևույթները լցվում են նաև խորհրդանշական իմաստով, որն իր հերթին երևան է հանում բանաստեղծության ողջ խորությունը:

Ֆրոսթն իր բանաստեղծական մտքերը կիսել է խիստ սահմանափակ ունկնդրի հետ իր բանաստեղծական յուրահատուկ մենախոսություններում, նաև երկխոսություններում, որոնք նախևառաջ տրամադրության, հոգու տրամադրվածության պտուղներն են բնության մեջ (*խոսելու պահը*): Դրանք մեծ մասամբ տխուր են, քանի որ ներկայացնում են իրարամերժ հատկություններ, իմաստուն են և շատ հաճախ կոկիկ: Ֆրոսթի բանաստեղծությունները համահունչ են բնության հետ և համամարդկային: Նրա թե՛ չափածո, թե՛ անհանգ բանաստեղծությունները օրգանապես ներդաշնակ են մարդ արարածի հետ, որը պահանջ է գզում շեղվելու կանոնավոր ռիթմից և չափից, ընդարձակվում է դեպի անսահման տող՝ վերադարձնելով առաջին հայացքից աննկատ ռեալիստական իմաստային խորությունը (*Աստղերը*):

Ֆրոսթի հոգեվիճակին չի համապատասխանում չափածո կաղապարը՝ իր կազմությամբ և հանգավորմամբ: Ահա թե ինչու է նա խախտում սահմանները, որոնում անհատ հերոսներ, որոնք բացահայտում են մարդկային հոգին և հայտնաբերում մարդուն համընդհանուր համակարգի մեջ: Երբեմն միայնակ, երբեմն՝ ոչ: Այդ համակարգը միաձուլում է մարդուն բնության հետ և մոտեցնում նրան կատարելության: Ֆրոսթը հաճախ հեգնում է աստվածայինը և վեհը մարդու մեջ (*Արհամարհանք*): Այս հեգնանքը թերևս նրա ծանր անձնական կյանքի հետևանքն է:

Ֆրոսթի հերոսները տարածության մեջ նոր սահմաններ են նվաճում, լցնում այն նոր հնչեղությամբ, որը մարդկային է, ոչ աստվածային, ակնթարթային պատմություն հավերժական անընդմեջ արձագանքներով, որոնք յուրահատուկ մոզական ուժ են հաղորդում բանաստեղծությանը:

### **Ֆրոսթը և բնությունը**

Ֆրոսթի ստեղծագործություններում բնությունը կարծես ևս մեկ և շատ կարևոր, մարդուց էլ ավելի կարևոր գործող անձ է: Այն կարող է լինել բնության որևէ մաս, կամ համամասնություն, որտեղ մարդը երբեմն չափազանց աննշան է և հանդես է գալիս կամայական, սակայն ոչ անտարբեր դիտորդի դերում: Ֆրոսթը որոնում և գտնում է բնության երևույթների, ժամանակի և մարդու միջև գոյություն ունեցող զարմանալի կապը: Չափազանց փոքր կամ մեծ բանաստեղծություններում նա ընկալում է աշխարհը որպես կենդանի կապակցություն, որտեղ կա բնականոն համերաշխություն և բնականոն բնության պայքար, անխուսափելի մահ և օրինաչափ զարթոնք: Շրջապատող աշխարհագրական երևույթները Ֆրոսթը դիտում է որպես փիլիսոփայական խորիմաստ գործողություններ, որոնք զուրկ չեն հիասքանչ պահերից և կատարյալ երևույթներից, ինչը չի վրիպում զգացող և տեսնող մարդու տեսադաշտից:

Սակայն այդ անսահման տարածքում բանաստեղծը ինքն իրեն միայնակ և անօգնական է զգում, լինելով պատմական իրողություններով և մարդկային հիշողություններով լի անկարող բանական արարած: Այդ մարդը դեռ չի ծուլվել քաղաքի մեջ, հարազատ մնալով իր ակունքներին, նա իրեն բացարձակ մարդ է զգում, երբեմն նույնիսկ վայրի և ողջախոհ: Ահա թե ինչու շատ հաճախ անխուսափելի տխրություն և միայնություն կա նրա բանաստեղծություններում, նույնիսկ եթե դրանք վերաբերում են երկու տարբեր մարդկանց, նրանց հարաբերություններին, նույնիսկ մեկ մարդկային զույգի:

Ապրելով մի ժամանակաշրջանում, երբ աշխարհը կիսված էր երկաթե վարագույրով, Ֆրոսթը աշխատում է զերծ մնալ քաղաքականությունից, թեպետև նրա ապրելաոճին հոգեհարազատ են հումանիստական սկզբունքները: 1950թ. նա Էռնեսթ Հեմինգուեյի հետ միասին պաշտպանում է քաղաքական հանցագործ համարվող Էգրա Փաունդին: 1962թ.-ին Ֆրոսթը կատարում է բարեկամական այց Սովետական Միություն:

1963թ.-ի օգոստոսին նախագահ Ջոն Ֆ. Բենեդիկն ճառ ասաց՝ նվիրված Ռոբերտ Ֆրոսթի անվան գրադարանի բացմանը Ամիերսթոն. *Հարգանքի տուրք մատուցելով Ռոբերտ Ֆրոսթին, մենք գիտակցում ենք, որ նրա ստեղծագործությունները մեր ազգային հզորության ամենախորը ակունքն են: Այդ ուժը տարբեր ձևեր է ընդունում: Ամենակնառու ձևերը միշտ չէ, որ ամենակարևորներն են: Այստեղ կարևորը մեր ազգային ուժն է, իսկ ոգին, որը տեղեկացնում և կառավա-*

*րում է մեր ուժը, նշանակում է այն, ինչ նշանակում է* (Poetry Foundation: Robert Frost 2016): Բանաստեղծը հավանաբար շոյված կզգար նման ճանաչում ունենալուց, քանի որ մի անգամ Հարվի Բրիթի հետ հարցազրույցի ժամանակ ասել էր. *Միակ բանը, որը կարևորում են, այն է, որ կցանկանայի, որ երիտասարդները ընդունեին պոեզիան իբրև հասկանալու առաջին ձև: Եթե պոեզիան չի հասկանում ամեն ինչ, ամբողջ աշխարհը, ապա ոչինչ չարժե* (Poetry Foundation: Robert Frost 2016):

Ֆրոսթի համար կարևոր էր մարդու ով լինելը ոչ այնքան հասարակության մեջ, որքան մարդկային անհատի կայացման մեջ, այն անհատի, որն արտահայտում է համընդհանուրը: Նա պոեզիան համարում էր երազանք, որը ապագա է ստեղծում:

40 տարեկանում Ֆրոսթը ստանում է Ամերիկայի չթագադրված բանաստեղծի տիտղոս: 1916թ.-ին Ֆրոսթը ընտանիքով հաստատվում է Նյու Հեմփշիրի նոր գնված ագարակում, Այստեղ Ֆրոսթը ծավալում է երկարատև մանկավարժական գործունեություն: Տարբեր տարիներին դասավանդում է Դարթմութի և Միչիգանի համալսարաններում, բայց ամենից երկար, մոտ 45 տարի Ամհերսթ քոլեջում, որի գրադարանը այժմ կոչվում է նրա անունով:

### **Եզրակացություն**

Ռոբերտ Ֆրոսթը 19-րդ դարի ամերիկյան պոեզիայի խաչմերուկում հայտնված բանաստեղծ է, քանի որ նրա ստեղծագործություններում հանդիպում ենք այդ ժամանակաշրջանին բնորոշ ավանդույթներ: Անգլիացիների համար Ֆրոսթը վերջին ռոմանտիկն էր, իսկ ամերիկացիների համար՝ կյանքի ճշմարտությանը հավատարիմ ռեալիստ:

Ֆրոսթի բեղմնավոր գրական ժառանգությունը խիստ և հստակ չի պատկանում որևէ ուղղության: Նա դուալիստ է, խուսափում է իրականության հակասություններից՝ փորձելով դրանց տալ համընդհանուր փիլիսոփայական երանգ: Նա չի հետապնդում որևէ քաղաքական կամ պատմական ենթատեքստ, այլ խորհում է՝ ընդհանրացնելով և մոտեցնելով համընդհանուր խոհերը անհատականին: Նա գրում է այն պահին, երբ ներսում հասունանում են և անսպասելիորեն պոռթկում ենթագիտակցորեն կուտակված մտորումները:

Ֆրոսթը համաձայն է ռոմանտիկ բանաստեղծների հետ, որ բանաստեղծությունն անմիջական փորձի վկայականն է, բայց քիչ չեն այն բանաստեղծությունները, երբ բանաստեղծական ձևը կարծես ստեղծվում է հենց աչքի առջև: Անհրաժեշտ է մի քանի անգամ կարդալ Ֆրոսթի բանաստեղծությունները գնահատելու, հասկանալու նրա բանաստեղծական վարպետության արվեստը: Չնայած Ֆրոսթը պատկանում է նոր բանաստեղծների շարքին, բայց իր բանաստեղծական հեղափոխությունը հաստատում է առավել ճշմարիտ միջոցներով՝ կարևորելով ռիթմը, հնչեղությունը և իմաստը: *Ֆրոսթը այն հազվագյուտներից էր, որ բնականորեն, առանց կեղծ ուսմունքների զգում էր այս գարմանալի աշխարհի իրական ու կենարար ծայնը և ողջ կյանքում հավատարիմ մնաց իր կենսափորձով ճշմարիտ պոեզիայի հրաշքին* (Հարությունյան 2000:114)

Ստորև ներկայացված են Ռոբերթ Ֆրոսթի բանաստեղծությունները՝ բնագրով՝ թարգմանված հողվածի հեղինակի կողմից 2015 թ-ին.

## To E.T.

*I slumbered with your poems on my breast  
Spread open as I dropped them half-read through  
Like dove wings on a figure on a tomb  
To see, if in a dream they brought of you,*

*I might not have the chance I missed in life  
Through some delay, and call you to your face  
First soldier, and then poet, and then both,  
Who died a soldier-poet of your race.*

*I meant, you meant, that nothing should remain  
Unsaid between us, brother, and this remained--  
And one thing more that was not then to say:  
The Victory for what it lost and gained.*

*You went to meet the shell's embrace of fire  
On Vimy Ridge; and when you fell that day  
The war seemed over more for you than me,  
But now for me than you – the other way.*

*How ever, though, for even me who knew  
The foe thrust back unsafe beyond the Rhine,  
If I was not speak of it to you  
And see you pleased once more with words of mine?*

## Ի. Թ.-ին

*Ես նիրհում եմ կրօքիս բացված  
Դեռ չընթերցված պոեմների գրքի վրա,  
Շիրմաքարին փորագրված աղավնու թևերի պես:  
Ու մտածում կօզնե՞ն նրանք, որ քեզ տեսնեն իմ երագում:*

*Ես չունեի հարմար առիթ, կորցրել եմ այն իմ կյանքում,  
Ուշացումով թեկուզ մի քիչ, երեսիդ եմ ասում ես.  
Նախ դու գինվոր, հետո՝ պոետ, հետո երկուսն էլ միասին.  
Ինչպես մեկը, որ վախճանվեց որպես պոետ իր ցեղի:*

*Հասկանում եմ, դու էլ գիտես,  
Որ մեր միջև չասված ոչինչ պետք չէ մնա,  
Բայց սա մնաց, և այն, ինչ պետք չէր ասել այն ժամ,  
Հաղթանակն էր, ինչի համար կորցրինք, գտանք:  
Դու գրկաբաց ընդունեցիր ռազմադաշտում կրակն ականի,  
Ու երբ ընկար, այդ օրը կռիվն ավարտվեց քեզ համար,  
Բայց ոչ ինձ համար.*

Իսկ հիմա ճիշտ հակառակը, ինձ համար՝ այո, իսկ քեզ համար՝ ոչ:

Ինչևէ, նույնիսկ ինձ համար էլ, ով հիմա գիտի,  
Որ թշնամին անապատով ետ մղվեց Ռեյնից այն կողմ:  
Երանի չխոսեի այդ մասին քեզ հետ,  
Ու իմ բառերից քեզ զոհացած նորից տեսնեի:

### THE ROAD NOT TAKEN

*TWO roads diverged in a yellow wood,  
And sorry I could not travel both  
And be one traveler, long I stood  
And looked down one as far as I could  
To where it bent in the undergrowth;  
Then took the other, as just as fair,  
And having perhaps the better claim  
Because it was grassy and wanted wear;  
Though as for that, the passing there  
Had worn them really about the same,  
And both that morning equally lay  
In leaves no step had trodden black.  
Oh, I marked the first for another day!  
Yet knowing how way leads on to way  
I doubted if I should ever come back.*

*I shall be telling this with a sigh  
Somewhere ages and ages hence:*

*Two roads diverged in a wood, and I,  
I took the one less traveled by,  
And that has made all the difference.*

### ՉԱՆՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀՐ

Երկու բաժանված ճանապարհի աշնանային անտառում,  
Ափսոս չեմ կարող անցնել երկուսն էլ,  
Մեկի ճամփորդը եղա, երկար կանգնեցի,  
Ճամփին երկար-երկար նայեցի,  
Թե որտեղ էր թեքվում՝ դառնում մանրանտառ:  
Հետո բռնեցի մյուս ճանապարհը,  
Միգուցե այն գրավեց ինձ այնքան,  
Որ կանաչ էր, բայց առանց ծառ ու թփի:  
Չնայած երկուսով անցնելն էլ նույն բանն էր իրոք,  
Երկուսն էլ նույնքան տրորված լինելով,

Լցված ին արավոտյան թափված տերևներով:  
Ես դրոշեցի անցնել այս մեկով,  
Իմանալով թեպետ այն ուր է տանում,  
Կասկածեցի՝ արդյո՞ք ինձ ետ է բերում:

Տարիներ անց  
Պատմելու եմ ես ավստասանքով:

Երկու ճանապարհ բաժանվեցին անտառում,  
Եվ ես ընտրեցի քիչ տրորված ուղին:  
Եվ միայն սա էր դրանց միակ տարբերությունը:

## STARS

*How countlessly they congregate  
O'er our tumultuous snow,  
Which flows in shapes as tall as trees  
When wintry winds do blow!—*

*As if with keenness for our fate,  
Our faltering few steps on  
To white rest, and a place of rest  
Invisible at dawn,—*

*And yet with neither love nor hate,  
Those starts like some snow-white  
Minerva's snow-white marble eyes  
Without the gift of sight.*

## ԱՍՏՂԵՐԸ

Անթիվ աստղերը կուտակվում են, թափվում,  
Խառնաշփոթ ձյան վրա,  
Լողալով անցնում ծառերի միջով,  
Երբ քամիներն են սուլում ծմբովա:

Տարված լինելով մեր ճակատագրով,  
Մեր դողդողացող քայլերն իր վրա,  
Անտեսանելի լուսաբացին նրանք  
Սպիտակեցնում են ամեն ինչ, որ կա:

Մինչդեռ ո՛չ սիրով, ո՛չ ատելությամբ,  
Աստղերն այդ, որ հիշեցնում են ձյունը ճերմակ,  
Նմանվում են միներալյան աստվածուհու մարմարե աչքերին,  
Որոնք ունեն անկենդան հայացք:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան, Ա.Ս. (2000) *Ընտրանի աներիկյան և անգլիական պոեզիայի*. Երևան: Ապրիլ:
2. (2016) *Poetry Foundation: Robert Frost*. Available at: <<http://www.poetryfoundation.org/bio/robert-frost>> [Accessed October 2016].
3. (2016) *Modernist Poetry in English: Robert Frost*. Available at: <[http://www.reference/modernist\\_poetry\\_in\\_English](http://www.reference/modernist_poetry_in_English)> [Accessed October 2016].
4. (1979) *Литературная история США*. / Под ред. Р. Спиллер, У. Торп. М.: Прогресс.

### **Robert Frost's Poetic World**

The article deals with the life, literary career and heritage of the 20<sup>th</sup> century American poet Robert Frost. It presents the poet's outlook, his original poetic approaches to life with special emphases on the effects of the nature. The interrelation of man and time has its unique place in Frost's poetry. Nontraditional forms of his poems are the distinguishing characteristic features of his poetry.

### **Поэтический мир Роберта Фроста**

Данная статья представляет жизнь, литературную деятельность и наследие американского поэта 20-го века Роберта Фроста. Обсуждаются своеобразные поэтические подходы поэта к жизни, его мировоззрение. В статье описываются особая выразительность, содержание его стихов и отражение удивительных явлений природы. Особое место в творчестве поэта занимают взаимоотношения человека и времени. Нетрадиционная форма стиха дается как одна из отличительных черт творчества поэта.